

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12
Վիճակագրության պետական խորհրդի նիստի

26.10.2004թ.

ժ. 10.30

Մասնակցում էին՝

Ս. Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ. Անանյան, Գ. Գևորգյան, Վ. Դավթյան, Հ. Պետրոսյան, Վ. Դանիելյան, (*խորհրդի անդամներ*), Ա. Աղազարյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝

Ջ. Սիրգոյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդական*), Վ. Սարոյան (*Իրավաբանական բաժնի պետ*), Ա. Կարապետյան (*Միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ*), Ն. Բաղդասարյան (*Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ*), Ա. Ավագյան (*Գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ*)

Օրակարգի նախագծում` վեց հարց.

1. «Հաշվետվություն գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերից դեկտեմբերի 1-ի դրությամբ հավաքված բերքի մասին 200 թ.» Ձև թիվ 29-ԳՏ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին.

/Ձեկուցող` Ա. Ավագյան/

2. «Հաշվետվություն ոռոգվող հողերի վրա կատարված գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերից դեկտեմբերի 1-ի դրությամբ հավաքված բերքի մասին 200 թ.» Ձև թիվ 29-ԳՏ (հավելված) տարեկան պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին.

/Ձեկուցող` Ա. Ավագյան/

3. «Հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության մասին» Ձև թիվ 1-հանրակրթություն (տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին և լրացման հրահանգին հավանություն տալու մասին.

/Ձեկուցող` Ն. Բաղդասարյան/

4. «Ֆինանսական միջոցների ստացումն ու օգտագործումը հանրակրթական ուսումնական հաստատություններում» Ձև թիվ 1-Ֆ (հանրակրթություն) (եռամսյակային) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին և լրացման հրահանգին հավանություն տալու մասին.

/Ձեկուցող` Ն. Բաղդասարյան/

5. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

5.1 Հաշվետվություն 2004թ. հուլիսի 13-ից սեպտեմբերի 18-ը ՄԱԿ-ի Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի վիճակագրական ինստիտուտում (Չիբա, Ճապոնիա) կազմակերպված «Պաշտոնական վիճակագրության վերլուծություն և մեկնաբանություն» խորագրով 3-րդ խմբի վերապատրաստման դասընթացին մասնակցության վերաբերյալ.

/Ներկայացնող` Ա. Կարապետյան /

5.2 Հաշվետվություն 2004թ. սեպտեմբերի 27-28-ն Իսպրա (Իտալիա) քաղաքում կայացած «Բերքի մոնիթորինգը և վիճակագրական ցուցանիշները Ռուսաստանում և Կենտրոնական Ասիայում» առաջին աշխատանքային հանդիպմանը մասնակցության վերաբերյալ.

/Ներկայացնող` Գ. Անանյան /

5.3 Հաշվետվություն 2004թ. հոկտեմբերի 4-6-ը Փարիզում կայացած «Վարչական աղբյուրների օգտագործումը վիճակագրությունում» խորագրով միջազգային սեմինարին մասնակցության վերաբերյալ.

/Ներկայացնող` Ս. Մնացականյան, Գ. Գևորգյան/

5.4 Հաշվետվություն 2004թ. հոկտեմբերի 4-8-ը Բոննում (Ռեինբախ) TACIS ծրագրի «Գյուղատնտեսության վիճակագրություն» նախագծի շրջանակում կայացած աշխատանքային հանդիպման վերաբերյալ.

/Ներկայացնող` Ա. Անանյան, Ա. Ավագյան/

6. Այլ հարցեր

ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. «Հաշվետվություն գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերից դեկտեմբերի 1-ի դրությամբ հավաքված բերքի մասին 200 թ.» Ձև թիվ 29-Գ-Տ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Ա. Ավագյան/

Որոշեցին՝

1. Հաստատել «Հաշվետվություն գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերից դեկտեմբերի 1-ի դրությամբ հավաքված բերքի մասին 200 թ.» Ձև թիվ 29-Գ-Տ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 12 օգոստոսի 2002 թվականի «Հաշվետվություն գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերից դեկտեմբերի 1-ի դրությամբ հավաքված բերքի մասին Ձև թիվ 29-Գ-Տ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 152-Ն որոշումը:

/Նորմատիվ/

/Բվեարկության արդյունքները - կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

2. «Հաշվետվություն ոռոգվող հողերի վրա կատարված գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերից դեկտեմբերի 1-ի դրությամբ հավաքված բերքի մասին 200 թ.» Ձև թիվ 29-Գ-Տ (հավելված) տարեկան պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Ա. Ավագյան/

Որոշեցին՝

1. Հաստատել «Հաշվետվություն ոռոգվող հողերի վրա կատարված գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերից դեկտեմբերի 1-ի դրությամբ հավաքված բերքի մասին 200 թ.» Ձև թիվ 29-Գ-Տ (հավելված) տարեկան պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 12 օգոստոսի 2002 թվականի «Հաշվետվություն ոռոգվող հողերի վրա կատարված գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերից դեկտեմբերի 1-ի դրությամբ հավաքված բերքի մասին Ձև թիվ 29-Գ-Տ (հավելված) տարեկան պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 153-Ն որոշումը:

/Նորմատիվ/

/Բվեարկության արդյունքները - կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

3. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության մասին» Ձև թիվ 1-հանրակրթություն (տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին և լրացման հրահանգին հավանություն տալու մասին.

/Ձեկուցող՝ Ն. Բաղդասարյան/

Որոշեցին՝

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության մասին»

Ձև թիվ 1-հանրակրթություն (տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին և լրացման հրահանգին՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 05 օգոստոսի 2003 թվականի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության Ձև թիվ 1-հանրակրթություն (տարեկան) «Հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության մասին» վարչական վիճակագրական հաշվետվության ձևին և լրացման հրահանգին հավանություն տալու մասին» թիվ 13 արձանագրային որոշումը:

/Արձանագրային/

/Զվեարկության արդյունքները - կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

4. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Ֆինանսական միջոցների ստացումն ու օգտագործումը հանրակրթական ուսումնական հաստատություններում» Հավելված 1 Ձև թիվ 1-Ֆ (հանրակրթություն) (Եռամսյակային) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին և լրացման հրահանգին հավանություն տալու մասին.

/Զեկուցող՝ Ն. Բաղդասարյան/

Վարչական վիճակագրական հաշվետվության ձևի և լրացման հրահանգի քննարկման ժամանակ ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամներ Վ. Դանիելյանի և Յու. Պողոսյանի կողմից ներկայացվեցին հաշվետվության ձևի և լրացման հրահանգի էական վերախմբագրմանը միտված բովանդակային առաջարկություններ՝ կապված նոր ցուցանիշների ներառման, կառուցվածքի փոփոխության, ներկայացման նոր ժամկետի հետ և այլն:

Որոշեցին՝

1. Հիմք ընդունելով քննարկման արդյունքները և ներկայացված առաջարկությունների կարևորությունը՝ առաջարկել ՀՀ ՎՊԽ անդամներ Վ. Դանիելյանին և Յու. Պողոսյանին կազմակերպել քննարկումներ ՀՀ կրթության և գիտության նախարարության ներկայացուցիչների հետ «Ֆինանսական միջոցների ստացումն ու օգտագործումը հանրակրթական ուսումնական հաստատություններում» Հավելված 1 Ձև թիվ 1-Ֆ (հանրակրթություն) (Եռամսյակային) վարչական վիճակագրական հաշվետվության ձևի և լրացման հրահանգի նոր տարբերակի մշակման համար:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 05 օգոստոսի 2003 թվականի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության Ձև թիվ 1-հանրակրթություն (եռամսյակային) «Ֆինանսական միջոցների ստացումն ու օգտագործումը» վարչական վիճակագրական հաշվետվության ձևին և լրացման հրահանգին հավանություն տալու մասին» թիվ 14 արձանագրային որոշումը:

/Արձանագրային/

/Զվեարկության արդյունքները - կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

5. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

5.1 Հաշվետվություն 2004թ. հուլիսի 13-ից սեպտեմբերի 18-ը ՄԱԿ-ի Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի վիճակագրական ինստիտուտում (Չիբա, Ճապոնիա) կազմակերպված «Պաշտոնական վիճակագրության վերլուծություն և մեկնաբանություն» խորագրով 3-րդ խմբի վերապատրաստման դասընթացին մասնակցության վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Ա. Կարապետյան /

5.2 Հաշվետվություն 2004թ. սեպտեմբերի 27-28-ն Իսպրա (Իտալիա) քաղաքում կայացած «Բերքի մոնիթորինգը և վիճակագրական ցուցանիշները Ռուսաստանում և Կենտրոնական Ասիայում» առաջին աշխատանքային հանդիպմանը մասնակցության վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Գ. Անանյան /

5.3 Հաշվետվություն 2004թ. հոկտեմբերի 4-6-ը Փարիզում կայացած «Վարչական աղբյուրների օգտագործումը վիճակագրությունում» խորագրով միջազգային սեմինարին մասնակցության վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Ս. Մնացականյան, Գ. Գևորգյան/

5.4 Հաշվետվություն 2004թ. հոկտեմբերի 4-8-ը Բոննում (Ռեինբախ) TACIS ծրագրի «Գյուղատնտեսության վիճակագրություն» նախագծի շրջանակում կայացած աշխատանքային հանդիպման վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Ա. Անանյան, Ա. Ավագյան/

Որոշեցին՝

Հաշվետվությունների վերաբերյալ հաղորդումն ընդունել ի գիտություն:

/Արձանագրային/

/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Ա. Աղազարյան